ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԱԾ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ (2012-2018 ԹԹ.)

Քնարիկ Ավագյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ lira777@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 30.06.2021, գրախոսվել է 18.02.2022, ընդունվել է տպագրության 07.03.2022
DOI:10.53548/0320-8117-2022.1-12
ՀՏԴ: 93(=919.81)(569.1) + 947.925 + 32

Ներածություն

Սիրիայում 2011 թ. մարտի 15-ից սանձազերծված պատերազմական թեժ գործողությունների ողջ ընթացքում և հետագայում հայերը տեղի բնակչության, ինչպես նաև ասորիների և այլէթնիկ, մասնավորապես քրիստոնյա խմբերի[1] նման, լինելով սիրիական հյուրընկալ երկրի հավատարիմ քաղաքացիներ, կրել են թե՛ մարդկային և թե՛ նյութական անասելի կորուստներ:

Զինյալները նպատակադրված թիրախավորել են մասնավորապես սիրիահայ համայնքի հոգևոր, կրթական ու մշակութային կենտրոնները: Ավերվել են «տասնամյակներ շարունակ սեփական բազուկներով և բազում զոհողությունների գնով կառուցված»[2] համայնքային գրեթե բոլոր կառույցները՝ եկեղեցիները, գերեզմանատները, դպրոցները, համայնքային և մշակութային օջախներն ու ակումբները: Ավերածությունների ու ոչնչաց-

---

[1] First Kessab Refugees Arrive in Armenia 2014, Asbarez, April 3. DeCaro, Joseph. Syrian Islamists Kill 80 Christians, Displace Thousands More. 2014, March 31, <http://www.worthynews.com>. Balkhian, Sarkis. 45 Days in Hell 2014, Asbarez, June 18.

[2] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 1-2, <http://www.mindiaspora.am>:

ման է ենթարկվել նաև Սիրիայի հայերի անձնական ունեցվածքը՝ տները, արտերը, գործատեղիները և այլն[3]:

Հայերի կրած մարդկային կորուստները (զոհեր, առևանգվածներ, համայնքի նոսրացում)

Ըստ պաշտոնական տվյալների՝ 2011-2017 թթ. Սիրիայի պատերազմի հետևանքով զոհվել է ավելի քան 225 հայ, այդ թվում՝ կանայք, երեխաներ, ծերեր: Հայ համայնքն ունեցել է հարյուրավոր վիրավորներ և հաշմանդամ դարձածներ[4]: 2017 թ. սեպտեմբերի դրությամբ առևանգվել է 109 հալեպահայ, որոնցից 103-ը ազատ է արձակվել փրկագնի դիմաց, իսկ 7-ը համարվել է անհետ կորած[5]:

Պատերազմի հետևանքով Սիրիայի հայ համայնքը կրճատվել է 2/3-ով[6]: 2017 թ. տվյալներով՝ Հալեպից հեռացել է հայ բնակչության 2/3-ը, Դամասկոսից՝ գրեթե կեսը[7]: Գրեթե ամբողջովին հայաթափվել են Դեյր-էզ-Զորի, Ռաքքայի շրջանները, Ղնեմիե, Յաղուբիե գյուղերը: 2014 թ. ի վեր հայերը սկսել են լքել նաև Թել Արման, Դերիք և այլ բնակավայրեր: Թեժ մարտերի հետևանքով հայերի զգալի արտահոսք է եղել նաև Հասաքե նահանգից, փոքրաթիվ հայ ընտանիքներ հեռացել են Հոմս քաղաքից՝ հաստատվելով սիրիական ափամերձ շրջաններում[8]:

Պատերազմի սկզբում համեմատաբար ավելի անվտանգ էին Սիրիայի ծովափնյա շրջանները՝ Թարթուսը, Բանիանը, Լաթաքիան, Քեսաբը և այլն, որտեղ և ժամանակավոր բնակություն է հաստատել Հալեպից, երկրի արևելյան նահանգներից և հակամարտության այլ շրջաննե-

---

[3] Սիրիահայ համայնքի կրած մարդկային և նյութական վնասների մասին տեղեկություններն առավելապես քաղել ենք ժամանակի պարբերական մամուլից, ինչպես նաև Սիրիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության հաղորդումներից:

[4] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 1, <http://www.mindiaspora.am>:

[5] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 2, <http://www.mindiaspora.am>:

[6] The Survival of Syria's Armenian Community 2014, Asbarez, September 24. 168 Hours: Two Third of Armenian Population Left Syria 2015, May 21, <http://www.panorama.am>.

[7] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 2, 3, <http://www.mindiaspora.am>:

[8] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 3, 4, <http://www.mindiaspora.am>:

րից ժամանած հայությունը: Դրա շնորհիվ կրկնապատկվել է տեղի հայության քանակը՝ չճշտված տվյալներով հասնելով մինչև 8000-ի[9]:

Արդեն 2014 թ. մարտի 21-ին, երբ Քեսաբը զինյալ հարձակման է ենթարկվել, բնական է, որ հայերը սկսել են հեռանալ նաև երբեմնի հայաշատ այդ վայրից. շուրջ 670 հայ ընտանիք հեռացել է դեպի հարակից Պասիտ, Լաթաքիա (2000 հայ) կամ Թարթուս քաղաքներ՝ ապավինելով միջազգային (Կարմիր խաչ և Կարմիր մահիկ) ու տեղական կազմակերպությունների աջակցությանը: Գրեթե ամբողջությամբ հայաթափված տարածքում մնացել են հեռանալու անկարող անձինք, հիմնականում՝ մեծահասակներ, որոնք շարունակել են մնալ իրենց տներում, մյուսները պատսպարվել են եկեղեցու սրահներում կամ դպրոցի դասասենյակներում՝ մատնվելով անորոշության[10]: Երեք ամիս անց՝ հունիսի 15-ին, Քեսաբն ազատագրվելուց հետո, հայերից շատերն այլևս չեն վերադարձել, այլ մնացել են Լաթաքիայում կամ անցել այլ վայրեր[11]: Շատերն ապաստան են գտել նաև Լիբանանում, առավելապես Բեյրութ մայրաքաղաքում և հայկական Այնճար գյուղավանում[12]:

Ընդհանուր առմամբ, բազմահազար սիրիահայեր արտագաղթել են ու հանգրվանել աշխարհի տարբեր երկրներում՝ Լիբանանում, Հորդանանում, Միացյալ Արաբական Էմիրություններում, ԱՄՆ-ում, Կանադայում, Շվեդիայում, Գերմանիայում, Ավստրալիայում և այլուր: Սիրիահայերի զգալի հատվածն ապաստան է գտել նաև հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (Արցախ): Ընդ որում, հայրենիք ժամանածների թիվը գերազանցել է, առանձին վերցրած, տարբեր երկրներ մեկնած սիրիահայերի թվին[13]:

---

[9] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 4, <http:// www.mindiaspora.am>:

[10] Armenian Homes in Kessab Looted 2014, Occupied, Asbarez, March 25. Kassabtzis in Diaspora Remember Their Quaint Town in Syria 2015, March 21, <http://gulfnews.com>.

[11] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 4, <http://www.mindiaspora.am>:

[12] Syrian Civil War Comes to Armenian Community 2014, April 3, <http://www.santafe newmexican.com>. Մկրտչյան Գայանե 2014, Քեսաբ, 17 հունիսի, <https://www.armenianow.com>:

[13] 17.000 սիրիահայեր ապաստան են գտել Հայաստանում 2016, մարտի 26, <http://armedia.am>:

Ընդհանուր առմամբ, 2018 թ. պաշտոնական տվյալներով, սիրիական պատերազմի հետևանքով Հայաստան է եկել 22000 սիրիահայ[14]:

Եկեղեցիներ

2017 թ. տվյալներով՝ Սիրիայում պատերազմը սկսվելուց ի վեր ռմբակոծվել, պայթեցվել, ավերվել, պղծվել են գրեթե բոլոր հայկական եկեղեցիները (շուրջ մեկ տասնյակից ավելի): Հարկ է նշել, որ իսլամիստ ահաբեկիչները հատուկ նպատակադրումով թիրախավորել են հայկական քրիստոնեական հոգևոր հաստատությունները և դրանցից առավել նշանակալիցները պայթեցրել հայ ազգի համար պատմական, ազգային ու կրոնական կարևորություն ունեցող հիշարժան կամ տոնական օրերին: Այսպես, 2012 թ. Թել Ապիատում ավերակների է վերածվել Սբ Խաչ հայկական եկեղեցին[15]: 2012 թ. օգոստոսի 10-ին (համընկել է հայոց պահանջատիրությունը խորհրդանշող՝ 1920 թ. Սևրի պայմանագիրը կնքելու օրվա հետ) թեժ ռմբակոծությունների հետևանքով զգալիորեն տուժել էր Հալեպի Ազգային առաջնորդարանը: Բարեբախտաբար, Առաջնորդարանի դիվանատունն իր վարչական և ծառայողական անձնակազմով նախօրոք տեղափոխվել էր Սուլեյմանիե թաղամասում գտնվող «Սիմոն Վրացյան» կենտրոն: Առաջնորդարանի շենքում պահվող արխիվներն ու ձեռագրերը նույնպես փոխադրվել էին ավելի ապահով վայր[16]: 2013 թ. սեպտեմբերի 28-ին ահաբեկիչները սկզբում տապալել են Ռաքքայի հայկական կաթողիկե Նահատակաց եկեղեցու գմբեթի խաչը և տեղում իսլամիստների սև դրոշն ամրացրել, ապա ռմբակոծել են եկեղեցին[17]:

2014 թ. Քեսաբում հիմնովին թալանվել, պղծվել, ավերվել ու հրկիզվել են հայկական բոլոր եկեղեցիները[18]: Քեսաբի տարածք ահաբեկիչների

---

[14] Human Dimension Implementation Meeting 2018, September 28, p. 1, <https://www.osce.org>. Armenians Embrace Syrians Fleeing War – and Their Food 2019, November 28, <https://www.curiositymag.com>.

[15] Raqqa Armenian Church Cross Replaced with Islamic State Flag 2017, October 26, <http://www.panarmenian.net>. Four Armenian Churches in Syria Destroyed by ISIS. 2015, December 15, <http://www.yerakouyn.com>.

[16] Բերիոյ Հայոց թեմը նոր մարտահրաւէրներու եւ յանձնառութիւններու դիմաց 2019, 14:

[17] Armenian Catholic Church of the Martyrs 2013, November 2, <https://world.wng.org>. Raqqa Armenian Church Cross Replaced with Islamic State Flag 2017, October 26, <http://www.panarmenian.net>.

[18] Kassabtzis in Diaspora Remember Their Quaint Town in Syria 2015, March 21, <http://gulf news.com>.

ներխուժման առաջին իսկ օրը՝ 2014 թ. մարտի 21-ին, պղծվել ու թալանվել է Գարատուրան շրջանի Սբ Աստվածածին Հայ առաքելական եկեղեցին: 2014 թ. մարտի 23-ին պղծվել ու հրկիզվել են Քեսաբի Հայ ավետարանական Սբ Երրորդություն եկեղեցին և գրադարանը, ապա՝ Սբ Միքայել հայկական կաթոլիկ եկեղեցին[19]: Զգալի վնաս է հասցվել Գարատուրանի, Էքիզօլուքի (Հայ ավետարանական Սբ Էմանուել եկեղեցի) և Քեորքյունեի Հայ ավետարանական եկեղեցիներին[20]:

Քեսաբի ազատագրումից շատ չանցած՝ 2014 թ. սեպտեմբերի 21-ին, իսլամիստ ահաբեկիչները Դեյր-էզ-Զորում (Ալ-Դաշդիե թաղամաս) ականապատել և հեռակառավորվող սարքով հիմնահատակ պայթեցրել են Հայոց ցեղասպանության 1,5 մլն նահատակների հիշատակին կառուցված խորհրդանշական Սրբոց նահատակաց հայկական եկեղեցին[21]: Այն լուրջ վնասներ էր կրել տակավին 2012 թ. նոյեմբերի ռմբակոծման հետևանքով: Թանգարանի և հուշարձանի ստորին մասը, որտեղ պահվում էին Հայոց ցեղասպանության զոհերի մասունքները[22], ևս ավերվել է[23]: Նշենք, որ Դեյր-էզ-Զորի Սրբոց նահատակաց հայկական եկեղեցին կառուցվել է

---

[19] Մանճիկեան Կարօ Վ. 2017, Քեսապ եւ քեսապցիք 28 Մարտ, <http://www.arfd.a m>: Sherlock, Ruth. Kessab Churches Burned and Graves Destroyed 2015, January 4, <http://www. telegraph. co.uk>. Kessab Families Return to Assess Damage, Plan Return. "Asbarez," 2014, June 16. Syrian Armenians: Terrorists Burnt All Armenian Churches in Kessab 2014, June 17, <https://news.am>. Mesropyan: Majority of Armenians are Back in Kessab 2014, June 17, <http://www.panorama.am>. Մկրտչյան Գայանե 2014, Քեսաբ 17 հունիսի, <https://www.ar menianow.com>:

[20] Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, Չիլ Աբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, 78, 84:

[21] MacEoin, Denis. The Destruction of the Middle East 2014, December 27, <https:// www.gatestoneinstitute.org>. ՏԱՀԵՇ-ը Պայթեցուցած է Տէր Զօրի հայկական եկեղեցին, 2014, 21 սեպտեմբեր, <http://www.yerakouyn.com>: Ահաբեկիչները պայթեցրել են Դեյր Զորի հայկական եկեղեցին 2014, 22 սեպտեմբերի, <http://civilnet.am>:

[22] Հարկ է նշել, որ իսլամիստ ահաբեկիչների պայթեցրած Դեյր-էզ-Զորի Սրբոց նահատակաց հայկական եկեղեցում պահվող մասունքները, որոնք, բարեբախտաբար, ժամանակին հանձնվել էին Հայոց ցեղասպանության թանգարանին, հետագայում փոխանցվել են Արցախի Հանրապետությանը՝ ցեղասպանության 100-ամյա միջոցառումների շրջանակում Ստեփանակերտում կառուցվելիք զանգակատուն-հուշարձանի հիմքում տեղադրելու համար: Relics from Deir ez-Zor to Be Preserved in Stepanakert 2015, Asbarez, March 13.

[23] Der Zor Genocide Memorial Church, Museum Severely Damaged 2012, November 10, <http://www.armenianweekly.com>. Armenian Genocide Memorial Church, Museum in Syria Severely Damaged 2012, November 12, <http://www.armradio.am>.

1989-1990 թթ., օծվել՝ մեկ տարի անց: Եկեղեցուն կից Հայոց ցեղասպանության հսկա հուշահամալիրն ու թանգարանը նույնպես ավերվել են: Չնայած որ Դեյր-էզ-Զորում արդեն հայեր չէին մնացել, իսկ Սիրիայի հայերը, ընդհանուր առմամբ, աջակցում էին երկրի դեմոկրատացման ջանքերին և իրենց հեռու էին պահում ռազմական գործողություններից[24], այդուհանդերձ, իսլամիստները պայթեցման օրն իսկ պատահական չէին ընտրել՝ Հայաստանի Երրորդ հանրապետության անկախության օրը:

Պարբերաբար հրթիռակոծվել է և մասնակի ավերվել Դամասկոսի Բաբ Թումա թաղամասում գտնվող Հայ առաքելական և Կաթողիկե առաջնորդարանները[25]: Ռազմական գործողությունների ընթացքում ավերվել են նաև հայկական համայնքապատկան հետևյալ հոգևոր շինությունները՝ Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին կառուցված Մարկադեի մատուռը, Ռաս-ուլ-Այնի եկեղեցին, Ռաքքայի Հայ առաքելական եկեղեցին վերածվել է մզկիթի, մասնակի ավերվել և զինյալների տիրապետության տակ է անցել Հոմսի Սբ Մեսրոպ Հայ առաքելական եկեղեցին, Քեսաբի Հայ առաքելական և կաթողիկե եկեղեցիները մասամբ այրվել են, իսկ Հայ ավետարանական եկեղեցին և կից գործող մշակութային կենտրոնը հրկիզվել են ամբողջությամբ, Ընեմիե և Յաղուբիե գյուղերի եկեղեցիները կիսաքանդ վիճակում են: Ընեմիեի միակ հայկական Սբ Գևորգ եկեղեցու արտաքին քարերն ու զանգակը գողացել են, գմբեթի խաչն անհետացրել, հարակից սրահն ու երիցատունը ավերակների վերածել[26]:

Այդուհանդերձ, Հալեպում, Դեյր-էզ-Զորում, Քեսաբում և այլուր ազգային եկեղեցիների և շինությունների ավերումից հետո իսկ, համայնքային կառույցների պատասխանատուների որոշմամբ, այժմ արդեն Դամասկոսում 2015 թ. ապրիլի 26-ին կատարվել է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված հուշակոթողի հիմնարկեքը: Այն տեղի է ունեցել Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հովանավորությամբ, տեղի քրիս-

---

[24] ISIS Destroys Armenian Genocide Memorial Church in Der Zor 2014, Armenian Weekly, September 21. ՏԱՀԵՇ-ը պայթեցուցած է Տէր Զօրի հայկական եկեղեցին 2014, 21 սեպտեմբեր, <http://www.yerakouyn.com>: The Survival of Syria's Armenian Community 2014, Asbarez, September 24.

[25] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 2-3, <http://www.mindiaspora. am>:

[26] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 3, 4, <http://www.mindiaspora. am>: Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, ՉիլԱբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, 79:

տոնյա հարանվանական եկեղեցիների ղեկավարների, ինչպես նաև պառլամենտի մի շարք անդամների, նախարարների, կառավարիչների և մահմեդական մտավորականների մասնակցությամբ: Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը մի շարք միջոցառումներով և արարողություններով նշվել է նաև ավերակված Հալեպում[27]: Ի պատասխան՝ հենց նույն օրը՝ 2015 թ. ապրիլի 26-ին, Հալեպում պայթեցվել է պատմակրոնական արժեք ու նշանակություն ունեցող հնագույն Սբ Քառասնից մանկանց Մայր եկեղեցին (XV դ.), որը նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Բերիո թեմի Առաջնորդանիստ եկեղեցին էր: Իրանի հայերի կառուցված այդ եկեղեցու հիմնադրման 500-ամյակը նշվել էր 2000 թ. հենց նույն ապրիլի 26-ին՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսի հանդիսապետությամբ[28]:

2015 թ. հունվարի 9-ին Ռաքքայում հրթիռակոծվել և ամբողջությամբ ավերվել է Սբ Ռիտա Թիլել (St. Rita Tilel) հայկական կաթողիկե Մայր տաճարը՝ կից Առաջնորդարանով[29]: Ռմբահարվել են նաև Նոր Գյուղի Սբ Երրորդություն (Զվարթնոց) և Սուլեյմանիեի Սբ Փրկիչ (Սբ Վառվառա) եկեղեցիները և այլն: 2016 թ. հունվարի 17-ին հրթիռակոծման հետևանքով փուլ է եկել Հալեպի Հայ ավետարանական Էմանուել եկեղեցու պատմական շինության կղմինդրածածկ առաստաղը՝ պատճառելով զգալի վնաս[30]: Հալեպում լույս տեսնող Բերիո հայոց թեմի ազգային առաջնորդարանի պաշտոնաթերթ «Գանձասար. Բացառիկ»-ի 2019 թ. հաղորդած տվյալների համաձայն՝ թեմի 19 եկեղեցիներից վնասվել էր 9-ը, 7 մատուռներից՝ 2-ը[31]:

Ինչպես տեսնում ենք, հայկական հոգևոր կենտրոնների ռմբակոծումների օրերն ու տարեթվերը պատահական չեն ընտրվել. դրանք իրականացվել են համայնքի և հայ ժողովրդի համար կրոնական ու աշխարհիկ առումով նշանակալից ազգային ու պատմական հիշարժան տարեթվերին (Սբ Ծնունդ, Զատիկ, Հայոց ցեղասպանության հիշատակում, ՀՀ անկա-

---

[27] Aleppo Armenians Commemorate Genocide Centennial 2015, Asbarez, April 28.

[28] Aleppo's Oldest Armenian Church Bombed 2015, April 29, <http://www.agos.com.tr>.

[29] Barsoumian, Nanore. Armenian Catholic Cathedral in Aleppo Bombed Hours Before Mass 2015, Armenian Weekly, January 10. Raqqa Armenian Church Cross Replaced with Islamic State Flag 2017, October 26, <http://www.panarmenian.net>. Three Armenian Churches in Syria Destroyed by ISIS 2015, December 14, <https://www.youtube.com>.

[30] Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, ՉիլԱբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, 83, 85:

[31] Բերիոյ Հայոց Թեմը նոր մարտահրաւէրներու եւ յանձնառութիւններու դիմաց 2019, 11-12:

խության օր, պատմական հիշարժան տարեթվեր և այլն): Հետևաբար, ահաբեկիչներն ու նրանց հովանավորները, լավ տեղեկացված լինելով հայերի մասին և թիրախավորելով նաև նրանց, նպատակ են հետապնդել տարածաշրջանը մաքրել ինչպես բնիկ, հնագույն, նույնպես և մասնավորապես քրիստոնեական քաղաքակրթական ժառանգությունից ու նրանց կրողներից, տվյալ դեպքում՝ հայերից: Այդ հանգամանքը ևս վկայում է, որ սիրիական պատերազմը քաղաքացիական լինելուց ավելի և առավել աշխարհակալական նկրտումներ ուներ և հատուկ թիրախավորել էր նաև քրիստոնյա հայ համայնքը և նրա ազգային կառույցները:

Գերեզմանատներ

Սիրիայում պատերազմի սկզբից թիրախավորվել են նաև հայկական գերեզմանատները ինչպես Հալեպում, այնպես էլ Դեր-էզ-Զորում, Յակուբիեում[32] և այլուր: 2014 թ. գարնանն իսլամիստ ահաբեկիչները Քեսաբի հայկական գերեզմանատներում ավերածություններն իրականացրել են հատված առ հատված[33]:

Հարկ է նշել, որ 2013-2016 թթ. Հալեպում թաղումներն իրականացվել են պետության կողմից ժամանակավորապես տրամադրված Հալեպալ-Ջեդիդե (Նոր Հալեպ) թաղամասի քրիստոնեական գերեզմանատանը՝ «Քարմելիթ» վանքին կից: Իսկ Հալեպի ազատագրումից հետո պետական և քրիստոնեական միջհամայնքային ծրագրով աստիճանաբար տեղի է ունեցել աճյունների տեղափոխում Ազգային գերեզմանատուն[34]:

Կրթամշակութային հաստատություններ

Հակառակ Հալեպի հայկական թաղամասերի (Նոր Գյուղ և այլն) ծանր ռմբակոծումներին ու զոհերին՝ համայնքային կյանքը Սիրիայում շարունակել է ընթանալ պատերազմական պայմաններում: Այսպես, 2015 թ.

---

[32] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 3, 4, <http://www.mindiaspora. am>:

[33] Kessab Families Return to Assess Damage, Plan Return 2014, Asbarez, June 16. Syrian Armenians: Terrorists Burnt All Armenian Churches in Kessab 2014, June 17, <https://news. am>. Mesropyan: Majority of Armenians are Back in Kessab 2014, June 17, <http://www. panorama.am>. Մկրտչյան Գայանե 2014, Քեսաբ, 17 հունիսի, <https://www.armenianow. com>: Sherlock, Ruth. Kessab Churches Burned and Graves Destroyed 2015, January 4, <http://www.telegraph.co.uk>.

[34] Բերիոյ Հայոց թեմը նոր մարտահրաւէրներու եւ յանձնառութիւններու դիմաց 2019, 16:

հոկտեմբերի տվյալներով, Սիրիայում գործել են հայկական 15 դպրոց, նաև որոշ եկեղեցիներ: Տեղերում գործել են սիրիահայերի շտապ օգնության կառույցները, ՀՀ դիվանագիտական մարմինները և հոգևոր կառույցները[35]:

Պատերազմի ընթացքում ռմբակոծվել, ավերվել կամ փակվել են բազմաթիվ հայկական դպրոցներ Սիրիայում, ականապայթյունների զոհ են դարձել տասնյակ աշակերտներ: 2017 թ. տվյալներով վնասվել է Հալեպում գործող 11 վարժարան և դպրոց: Ռմբակոծվել են «Մեսրոպյան» վարժարանը, «Քարէն Եփփէ» ճեմարանը, «Սահակեան» և «Զվարթնոց» վարժարանները և այլ դպրոցներ: Իսկ Հոմսի «Սահակյան» վարժարանը մասնակի ավերվել ու անցել է զինյալների տիրապետության տակ[36]:

Ռազմական գործողությունների ընթացքում Դամասկոսում նորաբաց հայկական միացյալ համալիրն իր կրթական, մշակութային և ժամանցի հաստատություններով կրել է ավելի քան 1 մլն դոլարի վնաս (այսպես, պայթունի հետևանքով վնասվել է տեղի Թեքեյան մշակութային կենտրոնը): Քաղաքի Բաբ Թումա թաղամասում գտնվող Հայ առաքելական և Կաթողիկե առաջնորդարաններին կից գործող դպրոցները պարբերաբար հրթիռակոծվել են՝ ենթարկվելով մասնակի ավերածությունների[37]:

Հիշյալ ժամանակահատվածում դպրոց էր հաճախում 3500 աշակերտ՝ նախկինում եղած քառապատիկի փոխարեն, ընդ որում, մեծ մասը դպրոցի մերձակայքերում բնակվող երեխաներն էին: Թեև պետական կրթարաններում քննություններն ընթացել են սովորականի պես, սակայն հայկական ազգային վարժարաններում սովորող աշակերտների ընտանիքների ընդհանուր թվի ընդամենը 20%-ն է կարողացել հոգալ իր երեխայի ուսման ծախսը, մնացածինը հոգացել է Ազգային մարմինը[38]:

Հալեպի Նոր Գյուղ թաղամասում գտնվող Քարեն Եփփե ազգային ճեմարանը 2012 թ. կեսերից անապահով տարածքում լինելու պատճառով

---

[35] Սուրիահայերը Շուէտի մէջ կրցան եկեղեցի ունենալ. Հրանոյշ Յակոբեան 2015, 30 հոկտեմբեր, <http://www.ragmamoul.net>:

[36] Սուրիահայ գաղութը տոկուն եւ զօրաւոր արմատներու վրայ հիմնուած ու կազմուած գաղութ է, Հայրենիք շաբաթաթերթ 2015, 2 դեկտեմբեր: Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, ՉիլԱբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, 82: Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 2-3, <http://www.mindiaspora.am>:

[37] Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 2-3, <http://www.mindiaspora. am>:

[38] Սուրիահայ գաղութը տոկուն եւ զօրաւոր արմատներու վրայ հիմնուած ու կազմուած գաղութ է, Հայրենիք շաբաթաթերթ 2015, 2 դեկտեմբեր:

աշակերտությանը նախ տեղափոխել էին «Սիմոն Վրացյան» կենտրոնի, ապա ազգային «Կյուլպենկեան» վարժարանի (Սուլեյմանիե թաղամաս) տարածք: Հալեպի Թիլել թաղամասում գործող Կիլիկյան ճեմարանի երեք մասնաշենքերը 2012 թ. ավերվել էին, և դպրոցը հարկադրված էր գործել Ազիզիե թաղամասում գտնվող «Նոր Սերունդ» մշակութային միության կենտրոնում՝ երկու հերթով. առավոտյան նախակրթարանի, ցերեկը՝ երկրորդական դասարանի աշակերտների համար: Իսկ մանկապարտեզի սաներին սկզբում տրամադրվել է Սուլեյմանիե թաղամասում գտնվող Ուրֆայի հայրենակցական միության կենտրոնը, ապա՝ Վիլլաներ թաղամասում գտնվող Ազգային մշակութային միության ակումբի կենտրոնը[39]:

2013 թ. մայիսի 14-ին, ապա՝ սեպտեմբերի 12-ին հրթիռակոծվել է Հալեպի Հայ ավետարանական Բեթել երկրորդական վարժարանը[40]: 2014 թ. մարտ-ապրիլին ավերվել ու հրկիզվել են Քեսաբի հայկական դպրոցները[41]:

2015 թ. տարեվերջի տվյալներով՝ Հալեպում գործել է միայն մեկ միացյալ ազգային դպրոց, այն էլ՝ Սուլեյմանիե թաղամասում տեղակայված ազգային «Կիւլպէնկեան» կրթօջախում: Ազիզիե թաղամասում գործել են ՀԲԸՄ «Լազար Նաճարեան» երկրորդական և «Կիլիկեան», Վիլլաներում՝ «Կրթասիրաց», ինչպես նաև ալ-Աշրաֆիե թաղամասում Կաթողիկե «Մխիթարեան» և Աւետարանական համայնքների դպրոցները[42]:

Ընդհանուր առմամբ, 2013-2017 թթ. ընկած ժամանակահատվածում ուսումնակրթական տարեշրջանների դասընթացներն իրականացվել են շենքային միացյալ պայմաններում: Այսպես, Հալեպում գործել են 1 ազգային մանկապարտեզ, սկզբում՝ 4, ավելի ուշ՝ 1 ազգային նախակրթարան և ազգային Քարեն Եփփե ճեմարանի միջնակարգ և երկրորդական բաժինները: Իսկ արդեն 2017-2018 թթ. ազգային Քարեն Եփփե ճեմարանի վերանորոգության աշխատանքների հետ կապված՝ ազգային «Կյուլպենկեան» վար-

---

[39] Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, ՉիլԱբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, 80, 81:

[40] Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, ՉիլԱբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, 83:

[41] Kessab Families Return to Assess Damage, Plan Return 2014, Asbarez, June 16. Syrian Armenians: Terrorists Burnt All Armenian Churches in Kessab 2014, June 17, <https://news.am>. Mesropyan: Majority of Armenians are Back in Kessab 2014, June 17, <http://www. panorama.am>. Մկրտչյան Գայանե 2014, Քեսաբ, 17 հունիսի, <https:// www.armenianow. com>:

[42] Սուրիահայ գաղութը տոկուն եւ զօրաւոր արմատներու վրայ հիմնուած ու կազմուած գաղութ է, Հայրենիք շաբաթաթերթ 2015, 2 դեկտեմբեր:

ժարանում են գործել Ազգային մանկապարտեզը և Ազգային միացյալ վարժարանը[43]:

Ազգային այլ հաստատություններ

Սիրիայի պատերազմի հետևանքով զգալի վնաս են կրել հայ համայնքի ազգային մյուս հաստատությունները ևս: Այսպես, հրթիռակոծության հետևանքով Ազգային կենտրոնական գրադարանի մի մասն անցել է փլատակների տակ: Ի դեպ, հարուստ գրադարանում պահվում էին ավելի քան 10000 հայերեն և օտարալեզու գրքեր: Պատերազմի դժնդակ տարիներին, այնուամենայնիվ, ապահովվել է Բերիո Հայոց թեմի Ազգային առաջնորդարանի «Գանձասար» շաբաթաթերթի լույսընծայումը: Ազգային առաջնորդարանի շրջակայքի վնասվելու հետևանքով «Օշական» գրատունը տեղափոխվել է ազգային «Կյուլպենկեան» վարժարանի կառույցի կողքին գտնվող ազգապատկան խանութ[44]:

Սիրիահայ ազգային իշխանության և Սիրիահայ օգնության խաչի (ՍՕԽ) հովանու ներքո գործող Հալեպի ազգային պատսպարանը, որը ընտանեկան ջերմությունից և նյութական բարեկեցիկ պայմաններից զուրկ երեխաների խնամքի կենտրոն էր, 2012 թ. սեպտեմբերին Նոր Գյուղի հրթիռակոծման հետևանքով զգալի ավերածությունների էր ենթարկվել[45]:

Հալեպի հայկական ծերանոցը, «Կյուլպենկեան» ծննդատունը, ինչպես նաև թերաճ երեխաների «Արևիկ» կենտրոնը հաճախակի հրթիռակոծվել են: Պատերազմի տարիներին ծերանոցը փոխադրվել է ծննդատան շենք, իսկ «Արևիկ» կենտրոնը 2013-ից տեղափոխվել է ազգային «Կյուլպենկեան» վարժարանի տարածք[46]:

---

[43] Բերիոյ Հայոց թեմը նոր մարտահրաւէրներու եւ յանձնառութիւններու դիմաց 2019, 17:

[44] Բերիոյ Հայոց թեմը նոր մարտահրաւէրներու եւ յանձնառութիւններու դիմաց 2019, 15:

[45] Համառոտ ակնարկ ՍՕ Խաչի տագնապներուն եւ վերականգնումի ջանքերուն 2019, 20: Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, ՉիլԱբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, 77:

[46] Բերիոյ Հայոց թեմը նոր մարտահրաւէրներու եւ յանձնառութիւններու դիմաց 2019, 19:

2013 թ. հրթիռակոծվել են նաև Հալեպի Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) բասկետբոլի, ֆուտբոլի և թենիսի մարզասրահներն ու մարզադաշտերը[47]:

2014 թ. գարնանն ահաբեկիչներն ավերել ու հրկիզել են Քեսաբի համայնքային կենտրոնները: Ոչնչացվել են Քեսաբի հնագիտական, կրոնական հուշարձանները, 150 տարվա մշակութային կենտրոնը, հնաոճ իրերը[48] և այլն:

Պատերազմի օրերին Սիրիահայ օգնության խաչի Դարմանատունը ևս տեղափոխվել էր Հալեպի Նոր Գյուղ հայկական թաղամասի ազգապատկան «Կիլիկիա» մասնաշենք: ՍՕԽ-ի ընկերաբժշկական կենտրոնի շինությունը 2014 թ. հունիսի 1-ին, ապա 2016 թ. փետրվարի 14-ին, ուժեղ հրթիռակոծվելով, դարձել է անգործածելի. անձնակազմը փոխադրվել է ազգային «Սահակեան» վարժարանի ներքնասրահ, իսկ կենտրոնում պահվող ՍՕԽ-ի արխիվը տեղափոխվել է ապահով վայր: ՍՕԽ-ի Կազդուրման կայանը (Քեսաբ) ևս ենթարկվել է պատերազմի ավերածություններին[49]:

Հայերի կրած նյութական վնասները (բնակարանային ֆոնդ, սեփականություն, արտադրություն)

Սիրիայի պատերազմը, համայնքայինից բացի, նաև հսկայական նյութական վնաս է հասցրել անհատապես հայ համայնքի ներկայացուցիչներին: Այսպես, տակավին 2014 թ. սեպտեմբերի տվյալներով, ավերվել են 1700 տուն և ազգային կառույց[50]:

Սիրիայում ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի հաղորդած տվյալների համաձայն, գրեթե հիմնահատակ ավերվել է Հալեպի հայաբնակ Նոր Գյուղ-Մեյդան թաղամասի բնակֆոնդը՝ շուրջ 1000 բնակարանով: Վնասվել են «Սիս», «Կիլիկիա», «Օշական», «Արցախ», «Նաիրի» ազգային բնակարանային համալիրները: Թալանվել և ավերվել են քաղաքի, ինչպես

[47] Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, ՉիլԱբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, 79:

[48] Kessab Families Return to Assess Damage, Plan Return 2014, Asbarez, June 16. Syrian Armenians: Terrorists Burnt All Armenian Churches in Kessab 2014, June 17, <https://news.am>. Mesropyan: Majority of Armenians are Back in Kessab 2014, June 17, <http://www.panorama.am>. Մկրտչյան Գայանե 2014, Քեսաբ, 17 հունիսի, <https://www.armenianow.com>: Residents Return to Kassab 2014, Horizon Weekly, June 24.

[49] Համառոտ ակնարկ ՍՕ Խաչի տագնապներուն եւ վերականգնումի ջանքերուն, 2019, 21, 22, 26: Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, ՉիլԱբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, 78:

[50] The Survival of Syria's Armenian Community 2014, Asbarez, September 24.

նաև Ռամուսե, Շեյխ Նաջջար, Արկուբ շրջանների հայապատկան խանութները, ֆաբրիկաները, գործարանները (շուրջ 1000 գործատեղի): Թալանվել, ավերվել և զինյալների տիրապետության տակ են անցել հայապատկան գործարանների, պահեստների զգալի մասը Դամասկոսում, տները, խանութները, գործատեղիները Քեսաբում[51]:

Երեք օրում Քեսաբի շրջանն ամբողջությամբ անցել է ահաբեկիչների ձեռքը: Ավերվել է նաև հայաբնակ ամառանոցային Քեսաբ քաղաքը: Իսլամիստ ահաբեկիչները Քեսաբ են մուտք գործել սահմանակից Թուրքիայից 2014 թ. մարտի 21-ին՝ Մայրերի օրը: Քաղաքը սկսել են ռմբակոծել առավոտյան, ապա, տնից տուն անցնելով, օրեր շարունակ ավերել, թալանել, պղծել, հրկիզել են հայերի ունեցվածքը, սպանել պատահածներին, ինչպես նաև գրավել են հայերի տներն ու տեղավորվել այնտեղ: Ահաբեկիչներն առանձնացրել են կանանց տղամարդկանցից և տարել անհայտ ուղղությամբ[52]: Քեսաբի առևտրական հրապարակը կրակի է տրվել, իսկ դարավոր պատմություն ունեցող շենքերը վերածվել են մոխրակույտերի: Թալանվել ու ավերվել են հայերի տները, հրկիզվել են այգիները[53]: Ականատեսների վկայությամբ՝ «քաղաքն ամայացավ մի քանի ժամվա ընթացքում», «դարերն անհետացան ամիսների ընթացքում», «դարերի ժառանգությունը սրբվեց մեկ տարի չեղած»[54]:

Եզրակացություններ

Սիրիայում 2011 թ. մարտից սկիզբ առած և տակավին մինչև օրս երկրի առանձին վայրերում շարունակվող պատերազմի ընթացքում ամ-

---

[51] Հալէպի ազատագրումը զինեալ գրոհայիններէն մեծ խանդավառութիւն ու հոգեկան անդորրութիւն ստեղծեց բոլորին մէջ 2016, 16 Դեկտեմբեր, <http://www.arfd.am>: Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 2, 4, <http://www.mindiaspora.am>:

[52] Armenian Homes in Kessab Looted, Occupied 2014, Asbarez, March 25. Kassabtzis in Diaspora Remember Their Quaint Town in Syria 2015, March 21, <http://gulfnews.com>.

[53] Sherlock, Ruth. Kessab Churches Burned and Graves Destroyed 2015, January 4, <http://www.telegraph.co.uk>. Kessab Families Return to Assess Damage, Plan Return 2014, Asbarez, June 16. Syrian Armenians: Terrorists Burnt All Armenian Churches in Kessab 2014, June 17, <https://news.am>. Mesropyan: Majority of Armenians are Back in Kessab 2014, June 17, <http://www.panorama.am>. Մկրտչյան Գայանե 2014, Քեսաբ, 17 հունիսի, <https://www.armenianow.com>:

[54] Kassabtzis in Diaspora Remember Their Quaint Town in Syria 2015, March 21, <http:// gulfnews.com>. MacEoin, Denis. The Destruction of the Middle East 2014, December 27, <https://www.gatestoneinstitute.org>.

բողջովին ավերվել ու հրկիզվել են հայաշատ գյուղեր ու քաղաքներ, այդ թվում՝ Հալեպը, Դամասկոսը, հայաբնակ Քեսաբը, թալանվել, պղծվել ու հրկիզվել են հայկական եկեղեցիները, դպրոցները, ազգապատկան շինությունները, բնակելի տները, երկրի ողջ բնակչության հետ բնաջնջման կիզակետում է հայտնվել նաև տեղի հայությունը՝ առանց խտրության: Պատերազմի պատճառով սկսված արտագաղթի, ինչպես նաև տված զոհերի հետևանքով հայ համայնքը շեշտակի նոսրացել է. 80000 հայից մնացել է շուրջ 10000-ը[55]:

Հանրային ու գիտական տարբեր մակարդակներում Սիրիային պատուհասածը բնորոշվել է «սիրիական ճգնաժամ»[56] եզրույթով: Եվ քանի որ հակամարտության հենց սկզբից պատճառված մարդկային տառապանքներն ու զրկանքները հավասարաչափ տարածվել են նաև տեղի հայ համայնքի վրա, որը հայտնվել է միջազգային ահաբեկչական ուժերի նշանառության տակ, ուստի հավասարապես շրջանառության մեջ են դրվել նաև «սուրիահայ ճգնաժամ», «սուրիահայ տագնապ»[57] և նմանատիպ այլ եզրույթներ: Հանգամանք, որը վկայում է այն մասին, որ Սիրիայի ճգնաժամը նաև հայ համայնքի ճգնաժամն էր:

Գրականություն

Ահաբեկիչները պայթեցրել են Դեյր Զորի հայկական եկեղեցին 2014, 22 սեպտեմբերի, <http://civilnet.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

Ապաճեան-ՉիլԱբոշեան Լուսին, Ազարիկեան-Պամաքսզեան Սեւան, ՉիլԱբոշեան-Պօղիկեան Մարինա, Հալլաճեան Սեւանայ 2019, Վերականգնումի աշխատանքներու համայնապատկեր, Գանձասար. բացառիկ, Հալէպ, 218 էջ (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

Բերիոյ Հայոց թեմը նոր մարտահրաւէրներու եւ յանձնառութիւններու դիմաց 2019, Գանձասար. բացառիկ, Հալէպ, 218 էջ:

Հալէպի ազատագրումը զինեալ գրոհայիններէն մեծ խանդավառութիւն ու հոգեկան անդորրութիւն ստեղծեց բոլորին մէջ 2016, 16 դեկտեմբեր, <http://www.arfd.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

[55] Սիմավորյան, Հովյան, Վերանյան 2017, 153:

[56] Սիմավորյան, Հովյան, Վերանյան 2017, 153:

[57] Բերիոյ Հայոց թեմը նոր մարտահրաւէրներու եւ յանձնառութիւններու դիմաց 2019, 19:

Համաժողովներ. ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը 2017, 18-20 սեպտեմբերի, 4 էջ, <http://www.mindiaspora.am> (ներբեռնման օրը՝ 3.10.2019):

Համառոտ ակնարկ ՍՕ Խաչի տագնապներուն եւ վերականգնումի ջանքերուն 2019, Գանձասար. բացառիկ, Հալէպ, էջ 20:

Մանճիկեան Կարօ Վ. 2017, Քեսապ եւ քեսապցիք, 28 մարտ, http://www.arfd.am (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

Մեկնարկել է սիրիահայերի զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագիրը 2013, 6 հունիսի, http://hayernaysor.am (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

Մկրտչյան Գայանե 2014, Սիրիան քվեարկում է, 3 հունիսի, <https://www.armenianow.com> (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

Մկրտչյան Գայանե 2014, Քեսաբ, 17 հունիսի, <https://www.armenianow.com> (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

Սիմավորյան Արիստակես, Հովյան Վահրամ, Վերանյան Կարեն 2017, Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ, Երևան, Նորավանք ԳԿՀ, 274 էջ:

Սուրիահայ գաղութը տոկուն եւ զօրաւոր արմատներու վրայ հիմնուած ու կազմուած գաղութ է 2015, Հայրենիք շաբաթաթերթ, 2 դեկտեմբեր:

Սուրիահայերը Շուէտի մէջ կրցան եկեղեցի ունենալ 2015, Հրանոյշ Յակոբեան, 30 հոկտեմբեր, <http://www.ragmamoul.net> (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

ՏԱՀԵՇ-ը Պայթեցուցած է Տէր Զօրի հայկական եկեղեցին 2014, 21 սեպտեմբեր, <http://www.yerakouyn.com> (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

17.000 սիրիահայեր ապաստան են գտել Հայաստանում 2016, մարտի 26, <http://armedia.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020):

Aleppo Armenians Commemorate Genocide Centennial 2015, Asbarez, April 28.

Aleppo's Oldest Armenian Church Bombed 2015, April 29, <http://www.agos.com.tr> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Armenian Catholic Church of the Martyrs 2013, November 2, <https://world.wng.org> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Armenian Genocide Memorial Church, Museum in Syria Severely Damaged 2012, November 12, <http://www.armradio.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Armenian Homes in Kessab Looted 2014, Occupied, Asbarez, March 25.

Armenian Soldier Killed in Syria 2015, January 29, <http://www.tert.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Armenian Soldier of Syrian Army Killed 2014, December 26, <http://www.lragir.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Armenians Embrace Syrians Fleeing War – and Their Food 2019, November 28, <https://www.curiositymag.com> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Balkhian, Sarkis 2014, 45 Days in Hell, Asbarez, June 18.

Barsoumian, Nanore 2015, Armenian Catholic Cathedral in Aleppo Bombed Hours Before Mass, Armenian Weekly, January 10.

DeCaro, Joseph. Syrian Islamists Kill 80 Christians, Displace Thousands More 2014, March 31, <http://www.worthynews.com> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Der Zor Genocide Memorial Church, Museum Severely Damaged 2012, November 10, <http://www.armenianweekly.com> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

First Kessab Refugees Arrive in Armenia 2014, Asbarez, April 3.

Four Armenian Churches in Syria Destroyed by ISIS 2015, December 15, <http://www.yerakouyn.com> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Human Dimension Implementation Meeting 2018, September 28, p. 1, <https://www.osce.org> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

ISIS Destroys Armenian Genocide Memorial Church in Der Zor 2014, Armenian Weekly, September 21.

Kassabtzis in Diaspora Remember Their Quaint Town in Syria 2015, March 21, <http://gulfnews.com> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Kessab Families Return to Assess Damage, Plan Return 2014, Asbarez, June 16.

MacEoin, Denis. The Destruction of the Middle East 2014, December 27, <https://www.gatestoneinstitute.org> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Mesropyan: Majority of Armenians are Back in Kessab 2014, June 17, <http://www.panorama.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Raqqa Armenian Church Cross Replaced with Islamic State Flag 2017, October 26, <http://www.panarmenian.net> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Relics from Deir ez-Zor to Be Preserved in Stepanakert 2015, Asbarez, March 13.

Residents Return to Kassab 2014, Horizon Weekly, June 24.

Sherlock, Ruth. Kessab Churches Burned and Graves Destroyed 2015, January 4, <http://www.telegraph.co.uk> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

The Survival of Syria's Armenian Community 2014, Asbarez, September 24.

Syrian Armenians: Terrorists Burnt All Armenian Churches in Kessab 2014, June 17, <https://news.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Syrian Civil War Comes to Armenian Community 2014, April 3, <http://www. santafenewmexican.com> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

Three Armenian Churches in Syria Destroyed by ISIS 2015, December 14, https://www.youtube.com (ներբեռնման օրը՝ 24.03.2020).
Three Armenians Kidnapped in Syria Released 2013, January 8, <https://armenpress.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).
168 Hours: Two Third of Armenian Population Left Syria 2015, May 21, <http://www.panorama.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2020).

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԱԾ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ (2012-2018 ԹԹ.)

Քնարիկ Ավագյան

Ամփոփում

Սիրիայում 2011 թ. մարտից սկիզբ առած և տակավին մինչև օրս երկրի առանձին վայրերում շարունակվող պատերազմի ընթացքում ամբողջովին ավերվել ու հրկիզվել են հայաշատ գյուղեր ու քաղաքներ, այդ թվում՝ Հալեպը, Դամասկոսը, հայաբնակ Քեսաբը, թալանվել, պղծվել ու հրկիզվել են հայկական եկեղեցիները, դպրոցները, ազգապատկան շինությունները, բնակելի տները: Երկրի ողջ բնակչության հետ բնաջնջման կիզակետում է հայտնվել նաև տեղի հայությունը:

Բանալի բառեր՝ Սիրիայի պատերազմ, իսլամիստ ահաբեկիչներ, առևանգում, հայկական եկեղեցի, դպրոց, արտագաղթ, Սիրիայի հայ համայնքի ճգնաժամ:

ЧЕЛОВЕЧЕСКИЙ И МАТЕРИАЛЬНЫЙ УЩЕРБ, НАНЕСЕННЫЙ АРМЯНСКОЙ ОБЩИНЕ СИРИИ (2012-2018 ГГ.)

Кнарик Авакян

Резюме

В результате войны, начавшейся в Сирии в марте 2011 г. и продолжающейся до сих пор, в разных частях страны полностью были разрушены и преданы огню также населенные армянами села и города, в том числе – Алеппо, Дамаск, армянонаселенный Кесаб. Армянские церкви, школы и национальные учреждения и жилые дома были разграблены и осквернены. Местному армянскому населению, наравне с сирийским, также был нанесен огромный человеческий и материальный ущерб.

Ключевые слова – война в Сирии, исламские террористы, похищение, армянская церковь, школа, эмиграция, кризис армянской общины Сирии.

THE HUMAN AND MATERIAL DAMAGE APPLIED TO THE ARMENIAN COMMUNITY OF SYRIA (2012–2018)

Knarik Avagyan

Abstract

As a consequence of the war in Syria started in March 2011 and still continuing in different parts of the country, Armenian-populated villages and towns, including Aleppo, Damascus, Kessab, were completely destroyed and set on fire. The Armenian churches, schools, national buildings, houses were looted, desecrated and set on fire. The local Armenians, along with the entire population of the country, also appeared in the center of annihilation.

Key words – war in Syria, Islamic terrorists, kidnaping, Armenian church, school, emigration, crisis of the Armenian community.